

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 18 » հունիս 2019թ.

No 1616 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 16-Ի N 650-Լ ՈՐՈՇՈՒՄԻՑ ԲԵՆՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշումը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ`

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի առողջապահության բնագավառի միջոցառումների իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումների ցանկը՝ համաձայն Հավելվածի:

2. Միջոցառումների իրականացման համար որպես հիմնական պատասխանատու սահմանել ցանկում առաջինը նշված ստորաբաժանմանը:

3. Պատասխանատու ստորաբաժանումներին՝

1) միջոցառումների ծրագրով նախատեսված իրավական ակտերի նախագծերը մշակելիս ղեկավարվել Որոշման 2-րդ հավելվածով հաստատված նախագծերի հիմնավորումներով,

2) միջոցառումների ծրագրով նախատեսված իրավական ակտերի նախագծերը, ՀՀ վարչապետի աշխատակազմ առաքելուց առաջ, օրենքով սահմանված կարգով շրջանառել:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալներին՝ յուրաքանչյուրին իր մասով, հսկողություն սահմանել իր համակարգման ոլորտում գործող ստորաբաժանումների կողմից սույն հրամանին համապատասխան աշխատանքների իրականացման նկատմամբ:

5. Սահմանել, որ սույն հրամանով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր պատասխանատու ստորաբաժանումները (անկախ կատարող կամ համակատարող լինելու հանգամանքից) ընթացիկ հաշվետվություն են ներկայացնում աշխատանքները համակարգող Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալին:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Իրավական ակտի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելու վերջնաժամկետը/ միջոցառման կատարման ժամկետ	Պատասխանատու ստորաբաժանումների անվանումներ	Աշխատանքի կատարման ընթացիկ հաշվետվության ներկայացման վերջնաժամկետ	Համակարգող՝ առողջապահության նախարարի տեղակալ կամ գլխավոր քարտուղար
1.	Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացում (հեռուստատեսությամբ՝ հաղորդումներով, սոցիալական տեսահոլովակներով, ռադիո հաղորդաշարերի, տպագիր մամուլի և ցուցապաստառների միջոցով) (կետ 21.1)	2019թ. մայիսի 3-րդ տասնօրյակից 2023թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ (պարբերաբար)	1. ՀՀ ԱՆ հանրային առողջության բաժին 2. ՀՀ ԱՆ «Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Նանուշյան
2.	Առողջության առաջնային պահպանման օղակի թերապևտների/ ընտանեկան բժիշկների վերապատրաստման դասընթացների իրականացում ծխելու դադարեցմանն ուղղված բուժման և խորհրդատվության վերաբերյալ (կետ 21.2)	2020թ. հունվարի 2-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ հանրային առողջության բաժին 2. ՀՀ ԱՆ «Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Նանուշյան
3.	«Առողջ ապրելակերպի խթանման»	2020թ.	1. ՀՀ ԱՆ հանրային	յուրաքանչյուր	1. ՀՀ

	ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 21.3)	նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	առողջության բաժին 2. ՀՀ ԱՆ «Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	ամսվա 15	առողջապահության նախարարի տեղակալ Լ.Նանուշյան
4.	«Էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման տեսլականը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 22.1)	2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ «Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Ա.Ավանեսյան
5.	«Էլեկտրոնային առողջապահության համակարգի զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում (կետ 22.1)	2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ «Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Ա.Ավանեսյան
6.	«Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 23.1)	2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Հակոբյան
7.	«Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 23.2)	2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Հակոբյան
8.	Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում (կետ 23.3)	2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Հակոբյան

9.	«Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 24.1)	2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչություն 2. ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Հակոբյան 2. ՀՀ առողջապահության նախարարի Հ.Հարությունյան
10.	«ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 24.2)	2019թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ «Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ 2. ՀՀ ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչություն 3. ՀՀ ԱՆ դեղորայքային քաղաքականության վարչություն 4. ՀՀ ԱՆ մոր և մանկան առողջության պահպանման վարչություն 5. ՀՀ ԱՆ իրավաբանական վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Նանուշյան 2. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Ա.Ավանեսյան
11.	«Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 24.3)	2020թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչություն 2. ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Հակոբյան 2. ՀՀ առողջապահության նախարարի

					Հ.Հարությունյան
12.	«Արյան ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման, օգտագործման և տրամադրման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 24.4)	2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչություն 2. ՀՀ առողջապահության նախարարության իրավաբանական վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Հակոբյան
13.	«Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում (կետ 25.1)	2019թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ ԱՆ ՁԻԱՀԻ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խումբ	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Նանուշյան
14.	Տուբերկուլոզին և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման միջոցառումների ծրագրերը (տուբերկուլոզ՝ 2021-2023 թթ., ՄԻԱՎ/ՁԻԱՀ՝ 2022-2023թթ.) հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում (կետ 25.2)	2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԱՆ ՁԻԱՀԻ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խումբ	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Նանուշյան
15.	«Առողջապահական գործնական պայմանավորված ծնելիության բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 26.1)	2019թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	1. ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Հակոբյան

16.	«Ավագ և միջին բուժաշխատողների շտեմարանի ձևավորման և վարման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 27.1)	2020թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ «Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ 2. ՀՀ ԱՆ իրավաբանական վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Նանուշյան
17.	«Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության մասին» օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կետ 28.1)	2020թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ պետական առողջապահական գործակալություն 2. ՀՀ ԱՆ իրավաբանական վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Ա.Ավանեսյան
18.	«Մանկական վերականգնողական բժշկական օգնության մատչելիության բարելավման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում (կետ 29.1)	2019-2020 թթ., ավարտ՝ 2020թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ մոր և մանկան առողջության պահպանման վարչություն 2. ՀՀ ԱՆ իրավաբանական վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Հակոբյան
19.	Վայոց Ձորի մարզի նոր բժշկական կենտրոնի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով (կետ 30.1)	Մեկնարկ՝ 2019թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ Ավարտ՝ 2021թ. հունիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան
20.	Գեղարքունիքի մարզի նոր բժշկական կենտրոնի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով (կետ 30.2)	Մեկնարկ՝ 2019թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ Ավարտ՝ 2021թ. հունիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան

21.	Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի վերակառուցում (կես 30.3)	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման մեկնարկ՝ 2020թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, ավարտ՝ 2021թ. հուլիսի 1-ին տասնօրյակ: Շինարարական աշխատանքների մեկնարկ՝ 2021թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ, ավարտ՝ 2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ:	ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան
22.	Կոտայքի մարզի Նաիրիի բժշկական կենտրոնի կառուցում (կես 30.4)	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման մեկնարկ՝ 2020թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, ավարտ՝ 2021թ. հուլիսի 1-ին տասնօրյակ: Շինարարական աշխատանքների մեկնարկ՝ 2021թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ, Ավարտ՝ 2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ:	ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան
23.	Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ (կես 30.5)	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մեկնարկ՝ 2021թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, Ավարտ՝ 2022թ. հուլիսի 1-ին տասնօրյակ:	ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան

		Շինարարական աշխատանքների մեկնարկ՝ 2022թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ:			
24.	Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգում (կետ 30.6)	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մեկնարկ՝ 2021թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, Ավարտ՝ 2022թ. հուլիսի 1-ին տասնօրյակ: Շինարարական աշխատանքների մեկնարկ՝ 2022թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ, Ավարտ՝ 2023թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ:	ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան
25.	Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ (կետ 30.7)	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մեկնարկ՝ 2022թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, ավարտ՝ 2023թ. հուլիսի 1-ին տասնօրյակ: Շինարարական աշխատանքների իրականացման վերաբերյալ պայմանագրի կնքում՝ 2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան

26.	Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ մեկնարկ (կես 30.8)	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մեկնարկ՝ 2022թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, ավարտ՝ 2023թ. հուլիսի 1-ին տասնօրյակ: Շինարարական աշխատանքների իրականացման վերաբերյալ պայմանագրի կնքում՝ 2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ:	ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան
27.	«2021-2023 թվականների Իմունականխարգելման ազգային ծրագիրը, Իմունականխարգելման ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կես 31.1)	2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Նանուշյան
28.	Մարդու սպառման համար նախատեսված խմելու ջրի որակի մասին հրահանգի պահանջների համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանների լրամշակում և հաստատում (կես 31.2)	2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Նանուշյան
29.	«Մարզային բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը (կես 32.1)	2022թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչություն 2. ՀՀ ԱՆ իրավաբանական վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան

30.	«Երեխաների և դեռահասների համար հոգեբուժական ծառայությունների մատչելիության և որակի բարելավման ծրագրային միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում (կետ 33.1)	2020-2021թթ., ավարտ՝ 2021թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ մոր և մանկան առողջության պահպանման վարչություն 2. ՀՀ ԱՆ իրավաբանական վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Հակոբյան
31.	ՀՀ բնակչության դիսկային խմբերի շրջանում սքրինինգային հետազոտությունների իրականացում՝ ըստ հետևյալ հիվանդությունների՝ • հիպերտոնիա, • շաքարային դիաբետ, • արգանդի պարանոցի քաղցկեղ (կետ 34.1)	Շարունակական, ավարտ՝ 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան
32.	Շարժական մամոգրաֆ սարքի ձեռքբերում և կրծքագեղձի սքրինինգային հետազոտությունների իրականացում ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի բնակչության դիսկային խմբերի շրջանում (կետ 34.2)	Շարունակական, ավարտ՝ 2020թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ ԱՆ «Ծրագրերի իրականացման գրասենյակ»	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Հ.Հարությունյան
33.	«ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում (կետ 35.1)	2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	1. ՀՀ ԱՆ բժշկական օգնության քաղաքականության վարչություն 2. ՀՀ ԱՆ իրավաբանական վարչություն	յուրաքանչյուր ամսվա 15	1. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լ.Հակոբյան